



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N o 1039-Ա/2

«10» հուլիս, 2023թ.

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ 2023/2 ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Կազմակերպել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում երկակի նշանակության ծրագրերի աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության 2023/2 մրցույթը:

2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն Հավելված N 1-ի և հրավերի փաթեթը՝ համաձայն Հավելված N 2-ի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոսյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն կազմակերպում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում երկակի նշանակության ծրագրերի աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության 2023/2 **Մրցույթ**:

Մրցույթին մասնակցելու Հայտը լրացվում և ներկայացվում է առցանց (on-line) ռեժիմով՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի մրցույթների հայտերի և հաշվետվությունների ընդունման համակարգով (<https://grants.scs.am>), մինչև **2023 թվականի օգոստոսի 11-ը** ներառյալ (Հայտի ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին):

Մրցույթի հրավերի փաթեթը զետեղված է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի պաշտոնական կայքում (www.scs.am):

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի գիտության քաղաքականության վարչությունից աշխատանքային օրերին՝ ժամը 10:00 - 13:00 և 14:00 - 17:00, հեռ.՝ 010 21-01-40 (ներքին 122) կամ տեխնիկական հարցերի դեպքում՝ 010 21-01-40 (ներքին 108):

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարության գիտության կոմիտե

Հ Ր Ա Վ Ե Ր

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ 2023/2 ՄՐՑՈՒՅԹԻ

I. Ընդհանուր դրույթներ

1. Մրցույթը

1.1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում երկակի նշանակության ծրագրերի աջակցության հայտերի (այսուհետ՝ **Հայտ**) ընտրության 2023/2 մրցույթն (այսուհետ՝ **Մրցույթ**) անցկացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ **Նախարար**) 2023 թվականի հուլիսի 10-ի N 1039-Ա/2 հրամանի:

1.2. **Մրցույթը** կազմակերպում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն (այսուհետ՝ **Կոմիտե**) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում:

1.3. **Մրցույթն** ուղղված է երկակի նշանակության հետազոտությունների և կարողությունների ամրապնդմանը և զարգացմանը:

1.4. **Մրցույթն** իրականացվում է Հավելված N 2.1-ում նշված բնագավառների մասնագիտություններով:

1.5. Ներկայացվող գիտական նախագիծը (այսուհետ՝ **Նախագիծ**, Հավելված N 2.4) պետք է լինի հեռանկարային և իրագործելի, ինչպես նաև լինի կիրառելի ինչպես քաղաքացիական նպատակների այնպես էլ ռազմական կարիքների համար:

1.6. **Նախագիծն** իրականացման ավարտին պետք է ունենա Տեխնոլոգիաների պատրաստիության մակարդակներից (այսուհետ՝ **ՏՊՄ**) (Հավելված N 2.2) ավելի բարձր մակարդակ քան դիմելու պահին, բայց ոչ պակաս քան **ՏՊՄ 5**:

2. Նպատակը

Մրցույթի նպատակներն են.

- խթանել երկակի նշանակության գիտահետազոտական աշխատանքները՝ հետագայում ռազմական նշանակության մշակումներ իրականացնելու նպատակով,
- աջակցել նոր տեխնոլոգիաների ստեղծմանը և դրանց պատրաստիության մակարդակի բարձրացմանը,
- նպաստել արտադրության մեջ գիտական հետազոտությունների արդյունքների կիրառմանը,
- զարգացնել գիտական և ռազմարդյունաբերական գործունեություն իրականացնող կազմակերպությունների միջև համագործակցությունը,
- երկակի նշանակության գիտահետազոտական աշխատանքներում ներգրավել երիտասարդ հետազոտողների և ասպիրանտների:

3. Ժամկետները

3.1. Նախագծի իրականացման տևողությունը 12 կամ 24 ամիս է:

3.2. Մրցույթին դիմելու վերջնաժամկետն է 2023 թվականի օգոստոսի 11-ը: **Հայտերի** ուղարկման հնարավորությունը կարգելափակվի Երևանի ժամանակով ժամը 18:00-ին:

3.3. Պահանջվող փաստաթղթերը **Կոմիտե** են ներկայացվում առձեռն՝ մինչև 2023 թվականի **օգոստոսի 18-ը** ներառյալ (Օրբելի եղբայրների փողոց 22, 8-րդ հարկ, 805 սենյակ): **Կազմակերպության** կողմից ներկայացվող բոլոր **Հայտերին** վերաբերող փաստաթղթերը, մեկ ընդհանուր փաթեթով, **Կոմիտե** է ներկայացնում **Կազմակերպության** լիազորված անձը (գիտական քարտուղար կամ այլ)՝ առձեռն:

4. Խումբը

4.1. Նախագիծը մշակում և իրականացնում է 4-7 անդամից բաղկացած գիտահետազոտական խումբը (այսուհետ՝ **խումբ**), որը կազմված է ղեկավարից (այսուհետ՝ **խմբի ղեկավար**) և կատարողներից (այսուհետ՝ **խմբի կատարողներ**):

4.2. Խմբում պետք է ընդգրկվի առնվազն 2 աշխատակից Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ ծրագիր իրականացնող կազմակերպությունից և առնվազն 2 աշխատակից Ռազմարդյունաբերական համալիրի կազմակերպությունից:

4.3. Խումբը վերջին 5 տարիների համար գիտական և գիտատեխնիկական գործունեության տվյալ բնագավառում պետք է ներկայացնի **Հավելված 2.1-ով** ներկայացված

գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների մասնագիտություններով առնվազն 2 գիտական հրատարակում միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Science Citation Index Expanded (SCIE)», «Social Sciences Citation Index (SSCI)», «Emerging Sources Citation Index (ESCI)», «Arts&Humanities Citation Index (AHCI)») **կամ** գրքերի հղման ինդեքսի (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչությունների հրատարակած գրքի գլուխ կամ հոդված ժողովածուում **կամ** «Scimago Journal & Country Ranking» պորտալի առնվազն Q4 քառորդ, իսկ գիտաժողովի նյութերի դեպքում՝ առնվազն Q2 քառորդին համարժեք SJR ինդեքս (SCImago Journal Rank Indicator) ունեցող պարբերականներում (այսուհետ՝ **ՄԳՇ**):

4.4. Բեալի ցանկերում (Beall's list, <https://beallslist.net/>) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում կամ պարբերականներում հրատարակված աշխատություն ներկայացնելու դեպքում **Հայտը** փորձաքննության ենթարկելու հարցը կքննարկվի **Հայտերի** գնահատման նպատակով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհրդում (այսուհետ՝ **խորհուրդ**)

4.5. Խմբի անունից կարող է հանդես գալ միայն Խմբի ղեկավարը:

5. Խմբի ղեկավարը

5.1. Խմբի ղեկավար կարող է լինել այն անձը, ով՝

- ծնվել է 1953 թվականի հունվարի 1-ից հետո,
- ունի գիտական աստիճան կամ նախկինում ղեկավարել է հայտով ներկայացվող բնագավառի երկակի նշանակության ծրագրեր և ՀՀ պաշտպանության նախարարությունից կամ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերության կոմիտեից (այսուհետ՝ **ՌԱԿ**) ներկայացնում է այդ փաստը հավաստող փաստաթղթեր,
- ունի առնվազն երեք տարվա գիտական կամ ճարտարագիտական գործունեության աշխատանքային ստաժ Հավելված N 2.1-ով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների համապատասխան մասնագիտություններով:

6. Խմբի անդամները

6.1. Խմբի ղեկավարը և Խմբի կատարողները Նախագծի կատարման ընթացքում պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչներ կամ ռեզիդենտներ, ինչպես նաև բնակվեն Հայաստանի Հանրապետությունում:

6.2. Խմբի անդամները կարող են լինել բուհի առնվազն երրորդ կուրսի ուսանողներ, մագիստրատուրայի ուսանողներ կամ դիպլոմավորված մասնագետներ:

6.3. Խմբում պետք է ընդգրկվի **Նախագծին** առնչվող մասնագիտությամբ առնվազն երկու կատարող, ովքեր ծնվել են 1988 թվականի հունվարի 1-ից հետո:

6.4. Խմբի անդամների տարիքային շեմը կարող է բարձրանալ՝

- ՀՀ զինված ուժերում ծառայած լինելու դեպքում՝ 2 տարով,
- երեխայի խնամքի արձակուրդի դեպքում՝ յուրաքանչյուր երեխայի համար 1 տարով:

6.5. Խմբի անդամները (ներառյալ ղեկավարը) չեն կարող ընդգրկվել Մրցույթին ներկայացված մեկից ավելի Հայտերում, ինչպես նաև հանդիսանան Կոմիտեի կողմից ֆինանսավորվող միաժամանակ երկու մրցութային (այդ թվում՝ միջազգային) թեմաների/ծրագրերի ղեկավարներ կամ կատարողներ, եթե այդ թեմաների/ծրագրերի ֆինանսավորումը չի ավարտվում մինչև սույն **Մրցույթի** արդյունքներով երաշխավորվելիք **Նախագծերի** ֆինանսավորման սկսվելը:

6.6. 6.5 ենթակետի պայմանից բացառություն են կազմում հետևյալ մրցույթները՝

- ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի և Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտությունների խորհրդի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների հայ-իտալական համատեղ թեմաների աջակցություն «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ԻՀ ԱՀԽ - 2023»
- ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կրթության և հետազոտությունների նախարարության կողմից անցկացվող գիտական հետազոտությունների հայ-գերմանական համատեղ թեմաների աջակցություն «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ԳԿՀԴՆ - 2022»,
- «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր» (2021թ., 2022թ., 2023թ.),
- «Գիտական խմբերի մեկնարկի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդմանն աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթ» (2021թ.),
- «Առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթ» (2021թ.),
- «Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրմանն աջակցության ծրագիր» (2022թ., 2023թ.),

- «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր» (2022թ., 2023թ.),
- «Գիտական կադրերի (PhD, PostDoc) վերապատրաստման ծրագիր» (2022թ., 2023թ.),
- «Գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման ծրագիր» (2023թ.),
- «Գիտական խմբերի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդմանն աջակցություն - 2023»:

7. Կազմակերպությունը

7.1. Կազմակերպությունը պետք է լինի կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ ծրագիր իրականացնող կամ Ռազմարդյունաբերական համալիրից (այսուհետ՝ **Կազմակերպություն**),

7.2. **Կազմակերպությունը** պետք է ունենա **Նախագծին** առնչվող բնագավառում առնվազն երեք տարվա գործունեության փորձ:

7.3. **Կազմակերպությունը** հասանելիություն է ապահովում առկա ենթակառուցվածքներին և սարքավորումներին:

7.4. **Խմբի ղեկավարը** պետք է լինի **Կազմակերպության** աշխատակից:

7.5. Ֆինանսական նախահաշվով (այսուհետ՝ **Նախահաշիվ**) նախատեսվում է **Կազմակերպության** ղեկավարի իրավասությանը թողնված գումար, որով տնօրենը (ռեկտորը) ապահովում է **Կազմակերպության** (բուհի գիտական մասի) գործունեությունը և ստեղծում **Նախագծի** կատարման համար անհրաժեշտ պայմաններ:

7.6. **Կազմակերպությունը Խմբի ղեկավարին** է տրամադրում **Կազմակերպության** (բուհի ֆակուլտետի) գիտական (գիտատեխնիկական) խորհրդի եզրակացությունը, որտեղ պետք է նշվի, թե որքանով է **Նախագիծը** խոստումնալից և իրագործելի և որքանով է տվյալ **Նախագիծը** համապատասխանում **Կազմակերպության** գիտական ուղղություններին: Եթե **Կազմակերպությունը** չունի գիտական (գիտատեխնիկական) խորհուրդ, ապա պետք է ներկայացվի գիտության տվյալ բնագավառի ՀՀ որևէ հանրային գիտական կազմակերպության գիտական խորհրդի եզրակացություն:

7.7. **Նախագծի** իրականացման համար անհրաժեշտ սարքերը, նյութերը և ծառայությունները ձեռք են բերվում «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

7.8. Ձեռք բերված սարքերի ու սարքավորումների տնօրինման իրավունքը պատկանում է **Կազմակերպությանը**՝ հետագայում ևս կանոնադրական նպատակներով օգտագործման (գիտական և գիտահետազոտական աշխատանքների իրականացման) համար:

8. Ակնկալվող արդյունքները

8.1. **Նախագծի** վերջնարդյունքը պետք է լինի առնվազն **ՏՊՄ 5** (TRL 5, Հավելված N 2.2):

8.2. **Նախագծի** կատարման արդյունքում ակնկալվում է մասնակցություն **ՌԱԿ** գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական (**ԳՀՓԿ**) ծրագրերին:

8.3. Ակնկալվում է **Նախագծում** ներառված կազմակերպությունների միջև կնքված համագործակցության հուշագիր:

II. Հայտի լրացման և ներկայացման կարգը

9. Հայտ ներկայացնելը

9.1. **Հայտը** (Հավելված N 2.4) լրացնում և ներկայացնում է **Խմբի ղեկավարը՝ Կոմիտեի** հայտերի և հաշվետվությունների առցանց համակարգի (այսուհետ՝ **Համակարգ**) միջոցով (grants.scs.am)՝ մինչև 2023 թվականի օգոստոսի 11-ը ներառյալ:

9.2. **Համակարգի** միջոցով **Հայտն** ուղարկելուց հետո **Կոմիտե** են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը.

- **Խմբի ղեկավարի** դիմումը (Հավելված N 2.3),
- **Համակարգում** ձևավորված և ծածկագիր ստացած **Հայտի** տիտղոսաթերթը և

Նախահաշիվը,

- **Կազմակերպության** (բուհի ֆակուլտետի) գիտական (գիտատեխնիկական) խորհրդի եզրակացությունը: Եթե Կազմակերպությունը չունի գիտական (գիտատեխնիկական) խորհուրդ, ապա պետք է ներկայացվի տվյալ բնագավառի ՀՀ որևէ այլ հանրային գիտական կազմակերպության գիտական խորհրդի (այսուհետ՝ **Գիտական խորհուրդ**) եզրակացությունը,

- **Նախագծում** ներառված կազմակերպությունների ղեկավարներից գրություն, որ ծանոթ են **Մրցույթի** հրավերի պայմաններին և համաձայն են, որ իրենց աշխատակիցները ներգրավվեն **Նախագծի** աշխատանքներին և պատրաստ են համագործակցել առնվազն **Նախագծի** շրջանակներում,

- **Խմբի** անդամի ասպիրանտ կամ ուսանող հանդիսանալու դեպքում՝ տեղեկանք, որտեղ նշված են մասնագիտությունը և ուսուցման տարին,
- տարիքային շեմը ավելացնելու համար՝ գինվորական գրքույկի պատճենը կամ երեխայի խնամքի արձակուրդի մասին համապատասխան փաստաթղթի պատճենը,
- **Խմբի ղեկավարի** կենսագրական տվյալները (CV),
- ՀՀ պաշտպանության նախարարությունից կամ **ՌԱԿ**-ից երկակի նշանակության ծրագրի իրականացման փաստը հավաստող փաստաթուղթ(եր) (անհրաժեշտության դեպքում):

9.3. Անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել այլ փաստաթղթեր:

9.4. Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի գիտության քաղաքականության վարչությունից աշխատանքային օրերին՝ ժամը 10:00 - 13:00 և 14:00 - 17:00, հեռ.՝ 010 21-01-40 (ներքին 122) կամ տեխնիկական հարցերի դեպքում՝ Կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչությունից, 010 21-01-40 (ներքին 108) էլեկտրոնային փոստ՝ scexpert@scs.am:

10. Նախահաշիվը

10.1. Նախահաշիվը կազմված է «Աշխատանքի վարձատրություն» և «Այլ ծախսեր» հոդվածներից: «Այլ ծախսեր» հոդվածը բաղկացած է «Սարքեր, նյութեր և ծառայություններ», «Գործուղումներ», և «Վերադիր ծախսեր» ենթահոդվածներից:

10.2. Նախագծի ֆինանսավորման առավելագույն չափը յուրաքանչյուր տարվա (12-ամսյա կտրվածքով) համար նախատեսել 20 000.0 հազար (քսան միլիոն) ՀՀ դրամ:

10.3. Նախահաշվի «Աշխատանքի վարձատրություն» հոդվածում **Խմբի** անդամների աշխատանքի ամսական վարձատրության միջին հաշվարկային չափն ընդունել մինչև 200.0 (երկու հարյուր) հազար ՀՀ դրամ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները):

10.4. Աշխատանքի վարձատրության գումարը վերոնշյալ չափից պակաս նախատեսելու դեպքում տարբերությունը կարող է օգտագործվել **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածում:

10.5. Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Սարքեր, նյութեր և ծառայություններ» ենթահոդվածով կարող են նախատեսվել գիտական սարքավորումների, հետազոտությունների ընթացքում օգտագործվող նյութերի ձեռք բերման և/կամ ծառայությունների ծախսեր: **Նախագծի** շրջանակներում ծառայությունների մատուցման պայմանագիր կարող է կնքվել միայն իրավաբանական անձի հետ:

10.6. Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Գործուղումներ» ենթահոդվածով նախատեսվող գումարը կարող է օգտագործվել **Նախագծի** արդյունքների ստացման և ներկայացման նպատակով գիտական միջոցառումներին մասնակցելու համար:

10.7. Գործուղումների օրապահիկը և գիշերավարձը հաշվարկելիս անհրաժեշտ է առաջնորդվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ: **Խմբի** յուրաքանչյուր անդամի 2 և ավելի ամիս (12-ամսյա կտրվածքով) բացակայության դեպքում պետք է գրավոր համաձայնեցնել **Կոմիտեի** հետ՝ բացակայելուց առնվազն մեկ շաբաթ առաջ:

10.8. Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Վերադիր ծախսեր» ենթահոդվածով յուրաքանչյուր տարվա (12-ամսյա կտրվածքով) համար կարող է հայցվել մինչև 250.0 հազար (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

10.9. Նախահաշվով նախատեսված բոլոր ծախսերը անհրաժեշտ է հիմնավորել Նախահաշվի մեկնաբանության մեջ:

10.10. Նախահաշվի հիմնավորվածությունը և բաշխումը կարող են լրամշակվել **Խորհրդի** առաջարկությամբ և **Խմբի ղեկավարի** համաձայնությամբ:

Ուշադրություն. Կոմիտեն ընդունում է միայն Համակարգի կողմից ձևավորված և ծածկագիր ստացած հայտերը: Այն հայտերը, որոնք չեն ուղարկվել վերը նշված կարգով և ժամկետներում, փորձաքննության ենթակա չեն:

III. Հայտերի քննարկումը և գնահատումը

11. Հայտերի քննարկումը

11.1. Կոմիտեն ստուգում է՝

- **Մրցույթին** ներկայացված **Հայտերի** համապատասխանությունը **Մրցույթի** պայմաններին,

- Բեալի ցանկերում (*Beall's list, <https://beallslit.net/>*) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում կամ պարբերականներում հրատարակված աշխատությունների առկայությունը **Հայտում**:

11.2. Հայտը չի քննարկվում, եթե՝

- չի պարունակում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը,

- չի բավարարում Մրցույթի հրավերի պայմաններին,

- բովանդակությամբ համընկնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող կամ ֆինանսավորված որևէ այլ թեմայի/ծրագրի հետ,

- միաժամանակ ներկայացված է Կոմիտեի կողմից անցկացվող այլ մրցույթներին:

11.3. Ստուգման արդյունքները տրամադրվում են **Խորհրդին**:

11.4. **Խորհուրդը** քննարկում և հաստատում է փորձաքննության ենթակա **Հայտերի** ցանկը:

12. Փորձաքննությունը

12.1. **Հայտերի** փորձաքննությունն իրականացվում է երեք փուլով՝ գիտական փորձաքննություն, հարցազրույց և ՀՀ ռազմարդյունաբերական հանձնաժողովին կից ռազմատեխնիկական և գիտատեխնիկական խորհրդի ենթահանձնաժողովների (այսուհետ՝ **Ենթահանձնաժողով**) կողմից **Հայտերի** ռազմարդյունաբերական կարիքների համար կարևորության և նպատակահարմարության գնահատում:

12.2. **Խորհուրդը Կոմիտեի** հետ համատեղ մշակում և հաստատում է **Հայտերի** գիտական փորձաքննության, հարցազրույցի և **Ենթահանձնաժողովների** գնահատման թերթիկները և վարման կարգը:

12.3. **Կոմիտեի, Խորհրդի, Ենթահանձնաժողովների** և փորձագետների կողմից **Հայտի** բովանդակության, փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է՝ համաձայն «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթների:

13. Փորձաքննության առաջին փուլը

13.1. **Հայտերը** ենթարկվում են գիտական փորձաքննության, որի ժամանակ գնահատվում են **Նախագծի** արդի վիճակը, նորույթը, **Կազմակերպությունում Նախագծի** իրականացման նախադրյալները, ազդեցությունը ոլորտի զարգացման վրա, իրականացման ժամկետների հիմնավորվածությունը, մեթոդիկայի հիմնավորվածությունը, **Նախահաշվի** հիմնավորվածությունը, **Խմբի ղեկավարի** և կատարողների մասնագիտական որակավորումը և համապատասխանությունը **Նախագծին**, տեխնոլոգիայի պատրաստվածության մակարդակը, ինչպես նաև **Մրցույթի** առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

13.2. **Հայտը** գիտական փորձաքննության է ենթարկվում առնվազն երկու փորձագետի կողմից: Որպես փորձագետ կարող է հանդես գալ նաև **Խորհրդի** անդամը:

13.3. Յուրաքանչյուր **Հայտի** համար փորձագետը լրացնում է գիտական փորձաքննության գնահատման թերթիկ:

13.4. Փորձագետի առավելագույն գնահատականը կազմում է **Հայտի** առավելագույն գնահատականի 50 տոկոսը:

13.5. Երկու փորձագետների գնահատականները գիտական փորձաքննության առավելագույն գնահատականի 30 և ավելի տոկոսով տարբերվելու դեպքում **Հայտը** ենթարկվում է փորձաքննության երրորդ փորձագետի կողմից: Այդ դեպքում գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երեք փորձագետների՝ երկու իրար մոտ գնահատականների միջին թվաբանականն է: Երեք փորձագետների գնահատականների հավասար տարբերությունների դեպքում գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու առավելագույն գնահատականների միջին թվաբանականն է:

14. Փորձաքննության երկրորդ փուլը

14.1. Խորհուրդը և **Ենթահանձնաժողովները** **Խմբի ղեկավարի** հետ անցկացնում են հարցազրույց:

14.2. Յուրաքանչյուր **Հայտի** համար **Խորհրդի** և **Ենթահանձնաժողովները** անդամները լրացնում են հարցազրույցի գնահատման թերթիկը:

14.3. Հարցազրույցի առավելագույն գնահատականը կազմում է **Հայտի** առավելագույն գնահատականի 50 տոկոսը:

15. Փորձաքննության երրորդ փուլը

15.1. Հայտերը տրամադրվում են **Ենթահանձնաժողովներին՝ Նախագծերի** ռազմարդյունաբերական կարիքների համար կարևորությունը և նպատակահարմարությունը գնահատելու նպատակով:

15.2. Յուրաքանչյուր **Հայտի** համար **Ենթահանձնաժողովների** կողմից լրացվում է գնահատման թերթիկը:

15.3. Ենթահանձնաժողովների կողմից Հայտերի գնահատականը 0-1 միավոր է (0.25 միավոր միջակայքով):

16. Գնահատման արդյունքները

16.1. Փորձաքննության վերջնական գնահատականը ձևավորվում է գիտական փորձաքննության գնահատականների միջին թվաբանականի և հարցազրույցի գնահատականների միջին թվաբանականի գումարով, որը բազմապատկվում է **Ենթահանձնաժողովների** գնահատականով:

16.2. Կոմիտեն փորձաքննության արդյունքներով ձևավորում է **Հայտերի** վարկանիշային ցանկ՝ գնահատականների նվազման կարգով և ներկայացնում **Խորհրդի** քննարկման:

16.3. Խորհուրդը Կոմիտեի նախագահին է ներկայացնում **Հայտերի** գնահատականների վարկանիշային ցանկը:

16.4. Կոմիտեն, ելնելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում երկակի նշանակության ծրագրերին աջակցության մրցույթի համար հատկացումների չափից և **Մրցույթի** արդյունքներից, որոշում է շեմային գնահատականը և ֆինանսավորման երաշխավորված **Հայտերի** ցանկը, ղեկավարների ցուցակը և նախատեսվող ֆինանսավորման չափը ներկայացնում է **Նախարարի** հաստատմանը:

16.5. Նախարարի հրամանով հաստատվում է ֆինանսավորման երաշխավորված **Հայտերի** ցանկը, ղեկավարների ցուցակը և նախատեսվող ֆինանսավորման չափը:

16.6. Մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված **Հայտերի** ցանկը հրապարակվում է **Կոմիտեի** պաշտոնական կայքում:

16.7. Կոմիտեն Կազմակերպության ղեկավարին տրամադրում է տվյալ **Կազմակերպության** շահառու **Հայտերի** ցանկը:

16.8. Կոմիտեն Խմբի ղեկավարին տրամադրում է փորձաքննության արդյունքները և անցողիկ շեմային գնահատականը:

IV. Այլ դրույթներ

17. Պայմանագրերի կնքումը

17.1. Կոմիտեի, Կազմակերպության և Խմբի ղեկավարի միջև կնքվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային թեմաների իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր (այսուհետ՝ **Պայմանագիր**):

17.2. Պայմանագրերը կնքվում են **Մրցույթի** արդյունքները հայտնի դառնալուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

17.3. Խմբի ղեկավարի և Խմբի կատարողների աշխատանքների ամսական վարձատրությունն ապահովելու համար Կազմակերպությունը կնքում է պայմանագրեր՝ ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով, որոնց պատճենները ներկայացվում են **Կոմիտե:**

17.4. Նախագիծը սկսվում և իրականացվում է **Պայմանագրում** նշված ժամկետներում:

18. Հաշվետվությունը

18.1. Նախագծի իրականացման ընթացքում 12 ամիսը լրանալուց հետո, 10-օրյա ժամկետում **Կոմիտե** է ներկայացվում ընթացիկ **Հաշվետվություն** (24 ամիս տևողությամբ **Նախագծի** դեպքում), որի հիման վրա **Խորհուրդը** տալիս է եզրակացություն՝ **Նախագծի** ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին:

18.2. Նախագծի իրականացման 24 (12 ամիս տևողությամբ **Նախագծի** դեպքում 12) ամիսը լրանալուց հետո 20-օրյա ժամկետում **Կոմիտե** է ներկայացվում ամփոփիչ հաշվետվություն՝ որի հիման վրա **Խորհուրդը** տալիս է եզրակացություն՝ հաշվետվությունն ընդունելու մասին:

18.3. Նախագծի իրականացման ընթացքում **Կոմիտեն** կարող է իրականացնել **Նախագծի** մշտադիտարկում և արդյունքները ներկայացնել **Խորհրդին**:

18.4. Նախագծի ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին եզրակացություն տալիս՝ **Խորհուրդը** պետք է հաշվի առնի նաև մշտադիտարկման արդյունքները:

18.5. Կոմիտեն կարող է ֆինանսավորման երաշխավորված **Նախագծերի** անոտացիան և հաշվետվությունը հրապարակել տպագիր կամ էլեկտրոնային եղանակով:

19. Լրացուցիչ տեղեկություններ

19.1. Խմբի ղեկավարը Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածում կարող է կատարել ենթահոդվածներով նախատեսված ծախսերի վերաբաշխում՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորում և ստանալով **Կոմիտեի** գրավոր համաձայնությունը:

19.2. Խմբի ղեկավարի կողմից իր պարտականությունների կատարման անհնարինության դեպքում՝ **Կազմակերպության** ղեկավարի միջնորդությամբ, **Գիտական Խորհրդի** և **Խմբի** անդամների համաձայնությամբ, **Կոմիտեի** գրավոր թույլտվությամբ կարելի է կատարել **Խմբի ղեկավարի** փոփոխություն:

19.3. Խմբի կատարողի կողմից իր պարտականությունների կատարման անհնարինության դեպքում **Խմբի ղեկավարը** կարող է դիմել **Կոմիտե**՝ համարժեք փոփոխություն կատարելու կամ **Խմբի** անդամների թիվը մեկով կրճատելու միջնորդությամբ, ներկայացնելով համապատասխան հիմնավորում: **Խմբի** անդամների թիվը կրճատելու դեպքում **Կոմիտեի** հետ կնքվում է **Պայմանագրի** գնի փոփոխության մասին համաձայնագիր:

19.4. Խմբում կատարողի փոփոխություն կատարելու դեպքում **Խմբի ղեկավարը Կոմիտե** է ներկայացնում նոր կատարողի հետ դրամաշնորհի շրջանակներում կնքված պայմանագրի պատճենը:

19.5. Մտավոր սեփականության հեղինակային կամ արտոնագրային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութեր պարունակող **Նախագիծ** և հաշվետվություն ներկայացնելու դեպքում **Խմբի ղեկավարը** պետք է առաջնորդվի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» և «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դրույթներով:

19.6. Նախագծի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները գիտական ամսագրերում հրապարակելիս անհրաժեշտ է նշել Կոմիտեի կողմից ստացած աջակցության մասին.

The work was supported by the Science Committee of RA, in the frames of the research project N° _____.

Համապատասխան նշման բացակայության դեպքում հրապարակումը չի համարվելու թեմայի արդյունք, հետևաբար չի ընդունվելու Հաշվետվության մեջ:

20. Նախագծի ֆինանսավորման դադարեցումը

Կոմիտեն կարող է դադարեցնել **Նախագծի** ֆինանսավորումը, եթե.

- ընթացիկ հաշվետվություն սահմանված ժամկետում չի ներկայացվել կամ հաշվետվության վերաբերյալ **Խորհրդի** կողմից տրվել է բացասական եզրակացություն,
- **Նախահաշվի** «Այլ ծախսեր» հոդվածում կատարվել է վերաբաշխում առանց **Կոմիտեի** գրավոր համաձայնության,
- **Խմբի** կազմում կատարվել է փոփոխություն առանց **Կոմիտեի** գրավոր համաձայնության:

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1.2 Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ
- 1.3 Ֆիզիկա և աստղագիտություն
- 1.4 Քիմիա

2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

- 2.2 Էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ
- 2.4 Մեքենագիտություն և մեքենաշինություն
- 2.5 Քիմիական տեխնոլոգիաներ
- 2.6 Նյութագիտություն
- 2.10 Նանոտեխնոլոգիա

ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԻՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ (TRL)

- ՏՊՄ 1. Հիմնական սկզբունքները հետազոտված են
- ՏՊՄ 2. Տեխնոլոգիայի հայեցակարգը ձևակերպված է
- ՏՊՄ 3. Տեխնոլոգիան փորձարկված է լաբորատորիայում
- ՏՊՄ 4. Տեխնոլոգիան աշխատում է լաբորատորիայում
- ՏՊՄ 5. Տեխնոլոգիան փորձարկված է համապատասխան միջավայրում
- ՏՊՄ 6. Տեխնոլոգիան ցուցադրված է համապատասխան միջավայրում
- ՏՊՄ 7. Նախատիպը ցուցադրված է գործող միջավայրում
- ՏՊՄ 8. Տեխնոլոգիական գործընթացն ավարտված է, կա արտադրանք, որը համապատասխանում է ստանդարտներին և կարգավորումներին
- ՏՊՄ 9. Արտադրանքը շուկայում է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՅԻ _____
(անուն հայրանուն)
_____ ից
(ազգանուն)
_____ (հասցե)
_____ (հեռախոս)

Դ Ի Մ ՈՒ Մ

Խնդրում եմ ընդունել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում երկակի նշանակության ծրագրերի աջակցության գիտական նախագծերի հայտերի ընտրության 2023/2 մրցույթի մասնակցության «_____» ծածկագրով հայտը:

Դիմող՝ _____
(ստորագրություն)

(_____)
(անուն, ազգանուն)

« ____ » _____ 2023 թ.

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

Ներկայացնել հայերեն, յուրաքանչյուրը մինչև 13 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը.

1. Նախագծի անվանումը

2. Անույացիա

3. Թեմայի գիտական նպատակները և խնդիրները

4. Հերազոտական ծրագիրը

5. Իրականացման եղանակները, մեթոդները

6. Օրացուցային պլանը (ըստ եռամսյակների)

7. Տվյալ ուղղությամբ խմբի ունեցած ձեռքբերումները

8. Առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները

9. Ակնկալվող արդյունքը

- նոր տեխնոլոգիա
- կատարելագործված տեխնոլոգիա (տեխնոլոգիական գործընթաց)
- ծրագրային փաթեթ
- նախատիպ կամ մոդել
- փորձնական կամ լաբորատոր նմուշ
- այլ

10. Ներկայացման պահին Տեխնոլոգիայի պատրաստիության մակարդակը (Current technology readiness level, TRL)

1. Հիմնական սկզբունքները հետազոտված են
2. Տեխնոլոգիայի հայեցակարգը ձևակերպված է
3. Տեխնոլոգիան փորձարկված է լաբորատորիայում
4. Տեխնոլոգիան աշխատում է լաբորատորիայում
5. Տեխնոլոգիան փորձարկված է համապատասխան միջավայրում

- 6. Տեխնոլոգիան ցուցադրված է համապատասխան միջավայրում
- 7. Նախատիպը ցուցադրված է գործող միջավայրում
- 8. Տեխնոլոգիական գործընթացն ավարտված է, կա արտադրանք, որը համապատասխանում է ստանդարտներին և կարգավորումներին

Նախագծի ավարտին ակնկալվող տեխնոլոգիայի պատրաստիության մակարդակը (Output technology readiness level, TRL)

- 5. Տեխնոլոգիան փորձարկված է համապատասխան միջավայրում
- 6. Տեխնոլոգիան ցուցադրված է համապատասխան միջավայրում
- 7. Նախատիպը ցուցադրված է գործող միջավայրում
- 8. Տեխնոլոգիական գործընթացն ավարտված է, կա արտադրանք, որը համապատասխանում է ստանդարտներին և կարգավորումներին
- 9. Արտադրանքը շուկայում է

Ակնկալվող արդյունքի՝

1) տեխնիկական ցուցանիշները

2) քանակական և որակական ցուցանիշները (հրապարակումներ, գիտաժողովներ, նորարարական կարողության կիրառություն (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն))

3) Նմանակների հետ համեմատության ցուցանիշները՝

հիմնական տեխնիկական առավելությունները և/կամ թերությունները

հիմնական տնտեսական առավելությունները և/կամ թերությունները

այլ

11. Օգտագործված գրականության ցանկը